## 85 (269). ԴԵԼԻ ՔԵՇԻՇ[1]

*Տերտեր մե կէղնի, էդի շատ սրտոտ կէղնի, անուն կը դնին Դելի քեշիշ։*

*Էս մարդ օր մե դելնա՝ օր գործով էրթա մոտ բեկ. օր կը մոտենա քոշկին՝ բեկն ուր ծառաներուն հրամանք կիտա, օր ուր կապուկ կատղուկ շներ թողին վրր Դելի քեշիշին, ինք լե վերևեն ղշներ կը քշքշցու.*

*— Քեշիշ, հա՛ քեշիշ, քեշիշ, հա՛ քեշիշ։*

*Տերտերն ու շներ խել մե կը դվըզվին, մարդ ղշներ կը փախցու ուրանց տեղեր, ինք անվնաս կը մտնա քոշկ։*

*— Քե՛շիշ,— կըսե բեկ,— շներու հախեն չը կոցա՞ր աղեկ մե գեր։*

*— Է՜,— կըսե տերտեր,— մեկ քեշիշ հինգ-վեց մոլլին ի՞նչ կոնա էնե։*

---

[1] *Խենթ տերտեր. այստեղ՝ անվախի իմաստով (Ս. Բ.)։*